ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/54

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ
Մասնակից՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ֆարմեգուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2880-2021 գրությամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.02.2021թ.-ի թիվ 96 գրության հիման վրա, 01.03.2021թ.-ին «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 02.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/54 համարի ծածկագիրը:

10.03.2021թ.-ին, 12.03.2021թ.-ին, 19.03.2021թ.-ին և 26.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.03.2021թ.-ին:

2. «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 16.02.2021թ.-ին ներկայացված գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնելով է, որ ուղարկում են «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգին մասնակցած «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթացի նախաձեռնման համար, կից ներկայացնելով գնման ընթացակարգի թիվ 8 արձանագրության և գրանցամատյանի պատճենները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.02.2021թ.-ի թիվ 01.1/26/2431-2021 գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվությանը կից հիմքերը ամբողջական չեն և ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» գնման ընթացակարգին մասնակցի հայտի փաթեթը, գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը, պայմանագիր կնքելու նախագիծն ուղարկված լինելու և ընտրված մասնակցի կողմից պայմանագրի կնքումից հրաժարվելու փաստերը հավաստող ապացույցները:

Ի պատասխան 19.02.2021թ.-ի թիվ 01.1/26/2431-2021 գրության Պատվիրատուն 23.02.2021թ.-ի թիվ 96 գրությամբ ներկայացրել է «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի հայտը, գնման ընթացակարգի բոլոր արձանագրությունները, Մասնակցին ուղարկված պայմանագրի նախագծի և պայմանագիր կնքելու առաջարկի ֆայլերը և վերջինիս հրաժարվելու հիմքերը:

3. <u>«Ֆարմեգուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 03.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2880-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին նաև ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն:

09.12.2020թ. «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին է ներկայացվել գրություն (կցվում է), որով ՍՊԸ-ն հայտնել է, որ 439.000 ՀՀ դրամի փոխարեն ներկայացրել է 43.900 ՀՀ դրամ

և խնդրել է գնահատող հանձնաժողովին Ընթացակարգի 39-րդ չափաբաժնի մասով «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի հայտը մերժել: Նշված գրությունը ներկայացվել է «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի փոխտնօրեն Կարինե Հայրապետյանին, որը այս էլեկտրոնային եղանակով ուղարկել է ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Ն.Ավետիսյանին, իսկ թղթային օրինակը խնդրել է թողնել ՓԲԸ-ի տնօրենի ընդունարանում:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված 12.02.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության 2-րդ կետով ծանոթանում ենք, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ 2021թ. հունվարի 26-ին Ընթացակարգի 39-րդ չափաբաժնի մասով «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծ, սակայն վերջինս մինչև 10.02.2021թ. չի ներկայացրել հաստատված պայմանագիրը, ուստի հիմք ընդունելով Հրավերի 8.13-րդ կետը մերժել է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի հայտը:

«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 23.02.2021թ և ըստ ՀՀ ՖՆ բողոքներ քննող անձին ուղղված գրության՝ ընթացակարգը նախաձեռնվում է «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 23.02.2021թ. գրության հիման վրա:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՑ-ԼՕ-2021/54 ընթացակարգ նախաձեռնելու հիմքը առաջացել է 09.12.2020թ., որը չի արձանագրվել գնահատող հանձնաժողովի կողմից մոտ 2.5 ամիս՝ նույնիսկ 12.02.2021թ. թիվ 8 արձանագրությամբ՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ իբր «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն մինչև 10.02.2021թ. չի ներկայացրել հաստատված պայմանագիրը:

Այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 09.12.2020թ.-ին, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը մոտ 3 ամիս անց՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ 2021թ. հունվարի 26-ին Ընթացակարգի 39-րդ չափաբաժնի մասով «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծ, սակայն վերջինս մինչև 10.02.2021թ. չի ներկայացրել հաստատված պայմանագիրը,

Այնինչ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 09.12.2020թ.–ին և միայն 3 ամիս անց Պատվիրատուն որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Անգամ եթե ընդունենք, որ հիմքերը ի հայտ են եկել 12.02.2021թ. նիստի արձանագրությամբ կայացրած որոշմամբ, երբ ՍՊԸ-ի մասնակցությունը տվյալ ընթացակարգին դադարեցվել է, ապա հիմքերը ուղարկվել են ՀՀ ՖՆ միայն 23.02.2021թ., այսինքն չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված 5-օրյա ժամկետը:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր, մասնավորապես՝ /ՍՑ-ԼՕ-2019/233, ՍՑ-ՆԳ-2019/195 և այլն: Օրինակ՝ թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ

սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 01.12.2020թ.-ին հայտարարվել է «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն:

iii. «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Մասնակիցը թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկով 39-րդ չափաբաժնի համար առաջարկել է 43 900 ՀՀ դրամ:

v. «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն 09.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել է, որ 39-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է փաստացի ինքնարժեքից ցածր գին, ինչի պայմաններում առաջարկված գինը մոտ յոթ անգամ պակաս է ստացվում ապրանքի ձեռքբերման արժեքից, ինչով պայմանավորված խնդրել է 39-րդ չափաբաժնի մասով Մասնակցի հայտը մերժել:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.01.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 39-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին:

vii. 18.01.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

viii. Պատվիրատուն, 26.01.2021թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով պայմանագրի նախագիծը, հայտնել է, որ «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 39-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն և վաստակել 43900 (քառասուներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամի (ներառյալ բոլոր հարկերը) բժշկական պարագաների մատակարարման իրավունքը: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 36-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 32-րդ կետի «գ» ենթակետը և ընթացակարգի հրավերի 10-րդ բաժինը՝ Մասնակցի հետ կարող է կնքվել պայմանագիրը՝ օրենքով չարգելված ցանկացած ձևով ուղարկված՝ թիվ «ԿԵԱՊ-

ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2-6» ծածկագրով պայմանագրի նախագծի ընդհանուր գումարի 10%-ի չափով տուժանքի ձևով պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու և պայմանագրի նախագծի ընդհանուր 100%-ի չափով տուժանքի կամ կանխիկ փողի ձևով որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում՝ սույն առաջարկը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Համաձայն սույն ընթացակարգի հրավերի 8.23 կետի՝ սահմանված անգործության ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված պայմանագրի նախագիծը և դրա ներկայացման գրությունը կամ Մասնակցի կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները անհրաժեշտ է ներկայացնել «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենք՝ ք.Երևան, Ներսիսյան 7/1, 3-րդ հարկ, տնօրենի ընդունարան:

ix. Հանձնաժողովի 12.02.2021թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ սահմանված ժամկետում չի ստորագրել և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագիրը, ինչի արդյունքում Մասնակցի հայտը 39-րդ չափաբաժնի մասով մերժվել է, իսկ գնման ընթացակարգը նույն չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2880-2021 գրությամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 01.12.2020թ.-ին հայտարարված «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.01.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է 39-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին, ինչով պայմանավորված Պատվիրատուն, 26.01.2021թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 39-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն և Մասնակցի հետ կարող է կնքվել պայմանագիր «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2-6» ծածկագրով պայմանագրի նախագծի ընդհանուր գումարի 10%-ի չափով տուժանքի ձևով պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու և պայմանագրի նախագծի ընդհանուր 100%-ի չափով տուժանքի կամ կանխիկ փողի ձևով որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում՝ սույն առաջարկը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հանձնաժողովի 12.02.2021թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ սահմանված ժամկետում չի ստորագրել և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագիրը, ինչի արդյունքում Մասնակցի հայտը 39-րդ չափաբաժնի մասով մերժվել է, իսկ գնման ընթացակարգը նույն չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքներին, որ Պատվիրատուի մոտ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընթացակարգ նախաձեռնելու հիմքերը առաջացել են

09.12.2020թ.-ին՝ Մասնակցի կողմից Հանձնաժողովին ներկայացված գնման ընթացակարգի 39-րդ չափաբաժնի մասով «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին ներկայացված գրության հիմքով, Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից 39-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը ներկայացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով, ուստի Հանձնաժողովի կողմից Մասնակցի 09.12.2020թ.-ին ներկայացված դիմումի հիման վրա վերջինիս հայտը մերժելու հիմքեր առկա չեն եղել, որպիսի պայմաններում Հանձնաժողովը գործել է իրավաչափ:

Վերոնշյալով պայմանավորված, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընթացակարգ նախաձեռնելու հիմքերը չէին կարող առաջանալ 09.12.2020թ.-ին, քանի որ վերոնշյալ հիմքերը կարող էին ի հայտ գալ միայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված խախտման հիմքով, ինչը տվյալ դեպքում բացակայել է:

Ինչ վերաբերում է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից դիրքորոշմամբ նշված մեկ այլ հիմավորմանը, համաձայն որի Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընթացակարգ նախաձեռնելու հիմքերն ի հայտ են եկել 12.02.2021թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացրած որոշմամբ, երբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի մասնակցությունը տվյալ ընթացակարգին դադարեցվել է, իսկ գրությունը ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն միայն 23.02.2021թ.-ին՝ չպահպանելով Կարգի 45-րդ կետով սահմանված 5-օրյա ժամկետը, ապա Բողոքնոր քննող

անձն արձանագրում է, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընթացակարգ նախաձեռնելու հիմքերն ի հայտ են եկել 12.02.2021թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացրած որոշմամբ, իսկ համապատասխան հիմքերը Պատվիրատուն ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն ոչ թե 23.02.2021թ.-ին, այլ 16.02.2021թ.-ին՝ պահպանելով Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2880-2021 գրությամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/54 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**